կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, գործի քննության հետ կապված այլ ծախսեր են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին և հաշվի առնելով հայցի մերժումը, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերը պետք է կրի հայցվոր կողմը, և հաշվի առնելով պետական տուրքի նախապես վճարված լինելը, դատա-կան ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

ՔԴՕ 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Հաշվի առնելով Դատարանի 11.11.2024թ. որոշմամբ հայցի ապահովմն միջոց կիրառված լինելը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է վերացման սույն վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 11.11.2024 թվականին կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ «Արգելել «Ակբա Բանկ» ԲԲԸ-ին վճարել ՀՀԱՄՄՀ-ԳՀԱԾՁԲ-24/12 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում 19.06.2024թ. բանկային երաշխիքների տեսքով տրամա-դրված որակավորման ապահովում 7.553.000 ՀՀ դրամը և պայմանագրի ապահովում 5.036.000 ՀՀ

դրամը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը», պահպանել մինչև սույն վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, այդ պահից համարել վերացված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am